Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Կատարողական վարույթը կասեցնելու մասին

«27» դեկտեմբերի 2021թ. ք.Կապան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի տարածաշրջանային բաժանմունքի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայոր Ասլան Գարաքյանս, ուսումնասիրելով «02» հուլիսի 2020թ. հարուցված թիվ 06403096, «12» հոկտեմբերի 2021թ. հարուցված թիվ 08177503 կատարողական վարույթների նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան-ի կողմից «11» հոկտեմբեր 2021թ. տրված թիվ ՍԴ/0548/02/20 կատարողական թերթի համաձայն պետք է Կարեն Միքայելի Կոստանյան-ից «Արդշինբանկ» ՓԲԸ-ի օգտին բռնագանձել 1701873 ՀՀ դրամ և հաշվեգրվող տոկոսներ:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան-ի կողմից «29» հունիս 2020թ. տրված թիվ ՍԴ1/0282/02/19 կատարողական թերթի համաձայն պետք է Կարեն Միքայելի Կոստանյան-ից «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի օգտին բռնագանձել 1487829 ՀՀ դրամ և տոկոսներ:

Կատարողական գործողությունների ընթացքում պարզվեց, որ պարտապան Կարեն Միքայելի Կոստանյանին պատկանող գույքը բավարար չէ պահանջատիրոջ հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 28.1-րդ հոդվածներով և 37-րդ հոդվածի 8-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել «02» հուլիսի 2020թ. հարուցված թիվ 06403096, «12» հոկտեմբերի 2021թ. հարուցված թիվ 08177503 կատարողական վարույթները 90-օրյա ժամկետով.

Առաջարկել պահանջատիրոջը և պարտապաններին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան.

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում.

Որոշման պատճենն ուղարկել կողմերին.

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

Ավագ հարկադիր կատարող՝ Ա. Գարաքյան

Digitally signed by
GARAKYAN ASLAN
4004770084
Date: 2021.12.27
12:18:11 AMT